

# քանասիրական

Բ Ա Ն Ա Ս Տ Ե Ղ Ծ Ո Ի Թ Ի Ի Ն

## ԱՌԱՒՕՏԵԱՆ ԱՂՕԹՔ Ի ԴՐԱԽՏԻՆ

Այսպէս համայն ինչ պարզեալ, եւ փութացան նոքա ի դաշտ  
 Սակայն նախ, մինչ ի ներքուստ հովանաւոր դարաստանէն  
 Լրտաքս ի բացարձակն եկեալ ելին անդ տեսարան  
 Օրագելոյ առաւօտուն, 'ւարեգական նորայարոյց'  
 Ար զանիւսն ըզմրկանամբք դեռ հողովէր Ավկէանու,  
 Եւ ուղղաձիգս յերեսս երկրի ըզցօղաթուրմն արկանէր շողս,  
 Բզդրախտին եւ զԱքենայ երանաւէտ դաշտավայրաց  
 Յանպարոյրն անդ ի ծաւալ զարեւելից ցուցեալ ըզմարզս,  
 Վետնամածք անդէն նոքա խոնարհեցան պաշտել ըզՏէր,  
 Եւ յաղօթս իւրեանց մատեան, զոր յեղանակս յարափոփոխ  
 Ելլիւրէին այգուն այգուն, զի ոչ ձայնից ինչ փոփոխմունք  
 Եւ մրտացն ոչ ըզմայլումն սուրբ նուազէր նոցա երբէք՝  
 Հաստչին իւրեանց յօրհնութիւն, ի վայելուչ բանից բարբառ  
 Եւ կամ յերգս ափ յափոյ . զ' ինքնայորդոր խօսողութիւն  
 Ի շրթանց հոսէր նոցին ի թրւելեաց կամ յարձակ բան .  
 Եւ այնպէս իսկ ներդաշնակ՝ մինչ զի ոչ վին անդ կամ քնարի  
 Պէտ յառաւել էր քաղցրութիւն : Եւ ըսկրսան օրինակ զայս :

“ Լսողիկ քո մեծափառ մատանցդ են գործք, ծընող բարեաց,  
 Եւ մենակալ, քո իսկ է եւ բովանդակս այս յօրինուած  
 Օարմանահրաշ տիեզերաց . դու ինքնին զի ես սքանչելի,  
 Եւ նպատումդ, որ քան զերկինքս գերազանց ելեալ բազմիս,  
 Եւ ի մէջ աներեւոյթ, եւ ընդ աղօտ կամ տեսանիս  
 Ի խոնարհ այս քոյդ ի գործս, որ եւ սոքին քան զմիտս ի վեր  
 Վո բարութեանդ են քարող եւ աստուածեանդ զօրութեան :

Վուք որ լաւ եւս ոգել գիտէք, որդիք լուսոյ դուք զըւարթունք  
 Պատմեցէք, զի տեսանէք ըզնա, եւ զտիւն՝ ում չիք գիշեր՝  
 Ի ձայնս երգոյ եւ ի հրնչմունքս պարաւոր յարմարութեանց  
 Յրնծալիցք կայք զաթուով նորա պարփակ . դուք ի յերկին,  
 Եւ յերկիր աստ՝ դուք արարածքդ համաձայնեալ ամենեքեան  
 Բարձր արարէք զառաջին, վերջին, միջին եւ զանվախձան :  
 Վեղեցիկդ ի մէջ աստեղց, յետին ցայգուն անդ ի հանդէս,  
 Եթէ ոչ իսկ մանաւանդ այգուն ի դէպ դու պատշաճիս,  
 Տունջեան անշուշտ գրաւական, որ շողշողունդ քո ի ծիր  
 Պսակես ըզգուարթն առաւօտ, օրհնեա զնա քոյդ ի պարունակ,  
 Յորժամ տիւն առնու ծագել, ի քաղցր յայս պահ առաւօտին :

Վու արփիդ, մեծամարմին աշխարհիս ակն իսկ եւ ոգի,  
 Սեծագոյն քեզ զնա ծանիր, եւ օրհնութիւնս հրնչեա նորա  
 Ի մըշտաշարժդ անդ քո յընթացս, թէ մինչ ի յելս վերձեմիցիս,  
 Եւ մինչ կալեալ ըզմիջօրէ, եւ մինչ խոտոր վայրաբերիս :

Եւ դու լուսին, որ է երբեմն արփւոյն ծագող ընդառաջեալ,  
 Մերթ ընդ կայուն խոյս տաս աստեղս սահունս յիւրեանց անդ պարունակս,  
 Եւ դուք զն հրնգեակ այլ հրատք թափառական, դուք որ խաղայք  
 Ոչ առանց ինչ թէ նուագաց ի պարանցիկս խորհրդաւոր,  
 Օրհնութիւնքս տուք նրմա որ զլոյս կոչեացն ի խաւարէ:  
 ( )՛դ, եւ դուք տարերք, ո՛վ ի բնութեանն ի յարգանդէ  
 Ընդրանիկ եկեալ ի ծնունդս, որ ի քառեակ հոլովէք թիւ  
 Բզըրջան յաւերժական, բազմադիմակ. եւ զբնաւս որ են  
 Համախառնեալ եւ տայք ըզնունդ. ձեր անդադարըդ փոփոխմունք  
 Ըրարչին մերոյ մեծի նոր փոխեսցեն ցանգ օրհնութիւնս:  
 Շամանդաղք, եւ դուք շոգիք, որ միգամած եւ կամ աղօտ  
 Ի բըլրոց եւ լուսաձեմ լըձէն ի վեր արդ ամբառնայք  
 Մինչեւ զդրօշակդ ասրաձամուկ արփին յոսկի դըրուագիցէ,  
 ( )ն բարձրացարուք ի փառս Հաստչին տիեզերաց,  
 Թէ ի սքողել ձեր ամպովք զայլագունեալ երկնից դիտակ,  
 Եւ կամ զերկիր ծարաւուս յարբուցանել յարկեալ տարափս,  
 Ըղէ ի յելոդ անդ եւ յէջս յորդորեցէք զիւրն օրհնութիւնս:  
 Օրհնութիւնսն, եւ դուք հողմունք, որ ի չորից շնչէք ծագաց՝  
 Հեզիկ կամ խրոխտ հրնչեցէք. եւ սոճք ըզգլուխս ձեր տատանեալ  
 Ի նըշանակ պաշտաման ընդ բնաւ տընկոց խոնարհեցէք.  
 Ըղբերք, եւ ամենայն որ կարկաջուն էք ջուրց հոսանք՝  
 Ի քաղցրալուրդ անդ ի խոխոջ շըշնջեցէք զիւր օրհնութիւնս.  
 Չայնակից լերուք եւ դուք շունչք համօրէն դուք կենդանիք,  
 Թըռչունք որ երգ ի բերանի երկնից ի դրունս վերասլանայք՝  
 Համբարձէք ի թեւոդ անդ ձեր եւ դայլայլիկ՝ զիւր օրհնութիւնս,  
 Դուք որ ի ջուրս անդ կայտառք, լոր ի վերայ գընայքդ երկրի  
 Եւ ձեմն առնուք սիգալով, և կամ զեռայք խոնարհաբար,  
 Տուք վըկայութիւն թէ բնաւ ընդ այգ կամ երեկոյս  
 Լըռեցի՞ զոստն եւ հովիտ, զաղբիւր, ըզգով կամ հովանիս՝  
 Յիմ երգոցս հրնչեցուցեալ, ուսուցանել զիւրն օրհնութիւնս:  
 Խընդա, Տէրդ համաշխարհի, եւ հաճեսջիր ցանգ բարեշնորհ  
 Ըզբարին լոկ տալ մեզ ձիր, եւ գիշերին եթէ իցէ  
 Մըթերեալ ինչ չարիս, կամ թանգուղեալ գաղտնածածուկ՝  
 Օայն դու ի բաց հերքեա, Տէր, զերդ ըզխաւարն արդ մերժէ լոյս , , :

Օայս անմեղքն աղօթեցին, եւ ի խորհուրդս մըտաց նոցա  
 Հաստատուն խաղաղութիւն էջ եւ անդորր իւրեանց նախկին.  
 Եւ փութային յառաւօտուն անդ ի վաստակ մըշակութեանց  
 Ի միջի քաղցրիկ ցօղոյ, եւ ի ծաղկանց անոյշ բուրմունս:

ՄԻԼԴԸՆ, Դրախտ կորուսեալ,  
 ԳԻՐԳ Ե.

